# ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՋՐԱՆՑՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Վ. Ա. ԴԱՅՍԵՐՅԱՆ

*Ըստ սեպագիր արձանագրությունների, ուրարտական առաջին թագավորը, որը զբաղվել է ջրանցքների կառուցումով, Մինուան է (մ. թ. ա. 810—786 թթ.)։*

*Մինուան, որ երկրի կենտրոնական շրջաններում հսկայական ջրանցքաշինական աշխատանք էր կատարել, ոռոգելի դարձնելով գրեթե ամբողջ Վանա լճի ավազանը[1], ձեռնամուխ է լինում նաև Արածանի գետի վերին հոսանքների տնտեսության զարգացմանը։ Այս մասին են վկայում Մանազկերտի շրջանից գտնված հինգ սեպագիր արձանագրությունները[2]։*

*Մինուան կառուցում է նախ ռազմական խոշոր կենտրոն, որի մասին Մանազկերտից գտնված արձանագրության մեջ ասվում է. «Խալդյան զորությամբ, Խալդն տիրոջն իր Մինուա Իշպուինորգին այս տաճարը կառուցեց հոլակայ, ամրոց կառուցեց...»[3]։ Կառուցելով ամրոցը, որը պետք է ռազմական կարևոր հենակետ դառնար այդ շրջանների անվտանգությունը ապահովելու համար, այնուհետև Մինուան ձեռնամուխ է լինում տեղի տնտեսության զարգացմանը։ Այդ նպատակով ոռոգելի են դարձվում շրջակա տարածությունները, որի մասին են վկայում երեք արձանագրություններ։ Երկուսը գտնվել են Մանազկերտից հարավ-արևմուտք՝ Ադա և Խոտանլու գյուղերից, իսկ մեկը՝ հյուսիս-արևելքում գտնվող Մարմոս գյուղից[4]։*

*Ադայի արձանագրության մեջ ասվում է. «Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորգին այս ջրանցքը անցկացրեց. Մինուայի ջրանցք (է) անունը։ Կարեցի մինչև Մինուայի դաշտը, մինչև Ուլիշ[...]ինե քաղաքը, մինչև [...] քաղաքը...»[5]։*

*Խոտանլուի արձանագրության մեջ ասվում է. «(Մի) ջրանցք Մեննեզայից անցկացրի։ Մինուայի ջրանցք (է) անունը...»[6]։ Այնուհետև արձանագրության մեջ նշվում է, որ ջրանցքը շենացրեց Ուկուա, Զուգուխե, Իրնունե, Աբասն քաղաքներն իրենց շրջաններով[7]։*

*Ըստ ընդունված տեսակետի վերոհիշյալ ջրանցքները առանձին ջրանցքներ են[8] և անց են կացվել Դաինալա (Արածանի) գետի՝ Մանազկերտից հա-*

---

[1] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), №№ 43—56, 57, 58, 62:

[2] Նույն տեղում, №№ 59, 60, 72, 79։

[3] Նույն տեղում, № 72, տող 1—4։

[4] Նույն տեղում, №№ 59, 60, 61։

[5] Նույն տեղում, № 59, տող 1—7։

[6] Նույն տեղում, № 60, տող 5—8։

[7] Նույն տեղում, տող 9—13։

[8] Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, стр. 140; Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, 1964, стр. 43—44; Նույնի՝ Биаинили (Урарту), Ереван, 1970, стр. 388—389.

բավ-արևմուտք ընկած հատվածից[9]: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մինուան իր անվամբ կոչում էր միայն նշանավոր կառույցները, ինչպիսին էր, ասենք, 80 կմ հեռավորությունից բերված ջրանցքը[10], որը ոռոգում էր Տուշպա մայրաքաղաքի ու շրջակա հողերը, ապա կարելի է կարծել, որ Ադա և Խոտանլու գյուղերից գտնված հիշյալ արձանագրությունները վկայում են միևնույն ջրանցքի կառուցման մասին:

Եթե ջրանցքը անց է կացվել Մենեզայա—Մանազկերտ[11] քաղաքից, ինչպես պարզ կերպով ասվում է Խոտանլուի արձանագրության մեջ և հասել է մինչև Խոտանլու գյուղը, ապա ջրանցքը մինչև Արածանի գետը թափվելը դեռևս պետք է հոսեր Խոտանլուի և Արածանի գետի միջև գտնվող հարևան Ադա գյուղի մոտով և նոր թափվեր Արածանի գետը:

Հետաքրքիր է նաև, թե որտեղի՞ց է սկիզբ առել այս ջրանցքը: Քանի որ այն անց է կացվել Մենեզայա-Մանազկերտից, ուստի սկիզբը պետք է փնտրել քաղաքի շրջակայքում: Մանազկերտ քաղաքը գտնվում է Արածանի գետի և նրա ձախափնյա վտակ Բանսանի միախառնման տեղում: Ուստի վերոհիշյալ ջրանցքը կարող է անցկացվել այդ երկու ջրային աղբյուրներից: Ջրանցքը Մանազկերտ քաղաքի հարավ-արևմտյան մասից անցկացված լինել չէր կարող, ինչպես դա ենթադրվում է, որովհետև Արածանի գետի այդ մասը Մենեգայա-Մանազկերտից հոսանքով գեպի ցած է գտնվում: Հնարավոր է, որ Մարմոս գյուղում (որը գտնվում է Մանազկերտի մոտ, նրանից հյուսիս-արևվելք, Բանսան վտակի ափին) գտնված Մինուայի արձանագրության մեջ հիշատակված ջրանցքը սրա սկզբնական մասն է կազմել: Ամենայն հավանականությամբ այս ջրանցքը ևս Մինուայի անվամբ է կոչվել, որովհետև չնայած պահպանվել է արձանագրության միայն անեծքի բանաձևը, ուղղված արձանագրությունը փչացնողին և կամ էլ ջրանցքի կառուցումը ուրիշ մեկին վերագրողին[12], սակայն այդքանն էլ բավական է պատկերացում կազմելու, որ այս արձանագրությունը կարևոր ջրանցքաշինական կառույցի մասին է վկայում: Ինչպես ցույց է տալիս ջրանցքաշինության վերաբերյալ Մինուայի արձանագրությունների վերլուծությունը, նման անեծքի բանաձև ունեն միայն այն արձանագրությունները, որտեղ ջրանցքը կոչված է Մինուայի անվամբ[13]:

Այսպիսով, եթե ընդունելի համարենք, որ երեք արձանագրություններն էլ միևնույն ջրանցքի կառուցման մասին են վկայում, ապա կարող ենք ասել, որ սա բավականին խոշոր ջրանցքաշինական կառույց է եղել և իր չափերով (ունեցել է գրեթե 30 կմ երկարություն) հավանաբար ոռոգել է միայն Տուշպա մայրաքաղաքի համար կառուցված Մինուայի նշանավոր ջրանցքին: Մարմոս գյուղի մոտ սկիզբ առնելով՝ այս ջրանցքը հոսել է դեպի հարավ-արևմուտք և անցնելով Մենեզայա-Մանազկերտ քաղաքի տարածքով, հասել մինչև Խոտանլու և Ադա գյուղերը ու թափվել Արածանի գետը, իր ճանապարհին, ըստ արձանագրությունների, շենացնելով յոթ բնակավայր իրենց շրջակայքով:

---

9 Н. В. Арутюнян, Биаинили (Урарту), стр. 388—389.

10 Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, стр. 19.

11 О. О. Карагезян, Локализация урартского царского города Арцашку, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, N 5, էջ 69։

12 УКН, № 61.

13 Նույն տեղում, NN 43, 44, 45։

Ավարտելով այս հսկայական ջրանցքի կառուցումը, Մինուան այնուհետև ձեռնամուխ է լինում տնտեսական խոշոր մի կենտրոնի կառուցման աշխատանքներին, որը Մանազկերտի շրջանում պետք է կատարեր նույն դերը, ինչ հետագայում կառուցված Թեյշեբաինեն Արարատյան դաշտավայրում։

Մարմոս գյուղի հարևանությամբ գտնվող Բոստանկայա գյուղից գտնված արձանագրության մեջ ասվում է. «Խալդյան զորությամբ Մինուա Իշպուին-որդին այս գինու մառանը կառուցեց։ 900 ակարկի (կա) այնտեղ։ Ամրոց կառուցեց Հոյակապ...»[14]։ Գինու այս հսկայական մառանները իրենց տարողությամբ գիջել են միայն Թեյշեբաինեի գինու մառաններին[15], որը սակայն կառուցվել է գրեթե 100 տարի հետո։

Մենեզայա-Մանազկերտ քաղաքն ու Բոստանկայայի արձանագրության մեջ հիշատակված ամրոցը իր հսկայական գինու մառաններով Արածանի գետի վերին հոսանքներում նույն դերն են խաղացել, ինչ Էրեբունեն և Թեյշեբաինեն Արարատյան դաշտավայրում։ Երկու դեպքում էլ առաջինները եղել են ռազմավարչական կենտրոններ, իսկ վերջինները՝ վարչատնտեսական։

Մենեզայա-Մանազկերտ շրջանում տնտեսության զարգացման նպատակով ոռոգման աշխատանքները շարունակել է Մինուայի որդին և հաջորդը՝ Արգիշթե I-ը (մ. թ. ա. 786—764 թթ.)։ Նա մտահոգվել է Մանազկերտի դիմաց՝ Արածանիի աջ ափին գտնվող շրջանները ոռոգելի դարձնելու աշխատանքով։ Այդ մասին միակ գրավոր տեղեկությունը պահպանվել է Արգիշթե I-ի Խորխորոյան տարեգրության մեջ, ուր խոսվում է դեպի Տուարածյան դաշտ Դաինալաթինե գետից ջրանցք անցկացնելու մասին[16]։ Տուարածյան դաշտը սովորաբար նույնացվում է միջնադարյան հայկական Տուարածատափի հետ, որը գտնվում է Մանազկերտի դիմաց, Արածանիի աջ ափին։ Դաինալաթինե գետը, որից անց է կացվել այս ջրանցքը, հավանաբար Արածանի գետն է եղել[17], կամ էլ այդ շրջանում նրան սնուցող վտակներից մեկը։ Միայն այն փաստը, որ Արգիշթե I-ը Խորխորոյան տարեգրության մեջ իր բազմաթիվ արշավանքների հետ միասին հիշատակել է նաև այս ջրանցքի կառուցումը, կարելի է եզրակացնել, թե ինչպիսի մեծ նշանակություն է տվել նա այդ աշխատանքներին։

Ահա հիմնական այն գրավոր աղբյուրները, որոնք վկայում են ուրարտական ժամանակաշրջանում Մանազկերտի շրջանում կատարված ջրանցքաշինության մասին։

Վերոհիշյալ երկու ջրանցքները, կառուցված Մինուա և Արգիշթե I թագավորների կողմից, հանդիսացան Մենեզայա-Մանազկերտի շրջանի տնտեսական կյանքի հիմնական աղբյուրները, որտեղ այդ ժամանակներից սկսած բուռն կերպով զարգացավ գյուղատնտեսությունը և շարունակվեց գրեթե մինչև մեր օրերը։ Տնտեսության զարգացումը ինչպես երկրի կենտրոնական, այնպես էլ ծայրամասային շրջաններում ամուր հիմք հանդիսացավ ուրարտական պետության հետագա հզորության համար, որը և հանգեցրեց այն բանին, որ

---

[14] Նույն տեղում, № 79։

[15] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, 2, Ереван, 1952, стр. 74.

[16] УКН, № 127, տող 12—13։

[17] Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, стр. 39. Հ. Հ. Կարապետյան. Սեպագիր աղբյուրների Ալիա քաղաքը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 4, էջ 90։

*արգեն Մինուայի և Արգիշթե I-ի թագավորության շրջանում Թուրարտուն հաղթող դուրս եկավ Առաջավոր Ասիայում առաջնակարգ դիրքեր գրավելու համար Ասորեստանի դեմ մղված երկարատև ու համառ պայքարում և այդ առաջնությունը, հաղվադեպ բացառություններով, չզիջեց իր գոյության ողջ ընթացքում:*

## УРАРТСКОЕ ИРРИГАЦИОННОЕ СТРОИТЕЛЬСТВО В МАНАЗКЕРТСКОМ РАЙОНЕ

В. А. ГАЙСЕРЯН

**(Резюме)**

Из клинописных надписей, найденных в селах Ада, Хотанлу и Мармос Маназкертского района, известно, что царь Минуа (810—786 гг. до н. э.) построил ирригационный канал длиною почти в 30 км, который стал основным источником хозяйственной жизни района. По своей величине этот канал уступает только каналу того же царя Минуа, снабжавшему водой столицу государства Тушпа-Ван. После царя Минуа в Маназкертском районе ирригационным строительством занимался его сын Аргиште I (786—764 гг. до н. э.), который с правого берега реки Даннала (Арацани) провел канал для Туарацийской долины. Об этом свидетельствует знаменитая Хорхорская летопись Аргиште I.